ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2022 թվականի N 1182 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 1118-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 6-րդ հավելվածի «Միասնական մաքսասակագնային կարգավորման մասին» արձանագրության 4-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 3-րդ մասը և 34-րդ հոդվածի 1-ին մասը և «Արդյունաբերական քաղաքականության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման կարգը հաստատելու և լիազոր մարմին ճանաչելու մասին» N 1118-Ն որոշման հավելվածի՝

1) 2-րդ կետի 3-րդ ենթակետի վերջում դրված վերջակետը փոխարինել միջակետով.

2) 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) ներմուծում՝ ապրանքների ներմուծում Հայաստանի Հանրապետություն «Բացթողում ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով:».

3) 4-րդ կետի երկրորդ պարբերությունում «հայտատուի» բառը փոխարինել «անձի» բառով.

4) 4-րդ կետի երրորդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

5) 12-րդ կետը «ժամկետը» բառից հետո լրացնել «, իսկ ներմուծման սկզբնաժամկետը չի կարող լինել ավելի շուտ, քան սույն հավելվածի 13-րդ կետով նախատեսված հայտի՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ներկայացման հաջորդ օրը: Հայտը չբավարարելու դեպքում անձը վճարում է ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված ապրանքի համար մաքսատուրքը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով:» բառերով.

6) 16-րդ կետում «21-րդ կետով» բառերը փոխարինել «21-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով» բառերով.

7) 16-րդ կետը «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն» բառերով.

8) 18-րդ կետը «դիրքորոշումները,» բառից հետո լրացնել «եթե առկա չէ 21-րդ կետի 4-րդ ենթակետով մերժման հիմքը» բառերով.

9) 18-րդ կետը «աշխատակազմ:» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մարմինների դիրքորոշումն ստանալուց հետո, եթե առկա է 21-րդ կետի 4-րդ ենթակետով մերժման հիմքը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը մեկօրյա ժամկետում տեղեկացնում է անձին մերժման հիմքի առկայության մասին և առաջարկում մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերացնել մերժման հիմքը:».

10) 21-րդ կետի 2-րդ ենթակետում «հայտատուի» բառը փոխարինել «անձի» բառով.

11) 21-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) հայտը ներկայացնելու պահի դրությամբ անձն ունի ժամկետանց չկատարված հարկային և մաքսային վճարների վճարման պարտավորություններ, և այն չի վերացրել սույն հավելվածի 18-րդ կետով սահմանված ժամկետում:».

12) N 3 ձևի 1-ին տողում «Հայտատուի (կազմակերպության)» բառերը փոխարինել «Անձի» բառով.

13) N 3 ձևի 8-րդ տողում «հայտատուի» բառը փոխարինել «անձի» բառով.

14) N 4 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

29.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ